ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/53

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝

«Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս Ընդ Լիգըլ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Կարախանյանի (լիազորագիր, տրված 20.02.2019թ.)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.03.2019թ. թիվ 26/26/3353-19 գրությամբ «Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս Ընդ Լիգըլ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 21.02.2019թ. թիվ ԴՎԱ/684 գրության հիման վրա, 01.03.2019թ. թիվ 26/26/3353-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով

նախաձեռնել «Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս Ընդ Լիգըլ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս Ընդ Լիգըլ» ՓԲԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս Ընդ Լիգըլ» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 05.03.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

Ընկերությունը 11.12.2018թ. հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցելու համար:

Ընկերության կողմից հրավերի 4-րդ հավելվածի համաձայն՝ ներկայացվել է գնային առաջարկ, որում նշված «Ընդհանուր գինը»՝ «7 800 000 (յոթ միլիոն ութ հարյուր հազար)» ՀՀ դրամի չափով (ներառյալ ԱԱՀ) իրենից ներկայացնում է Ընկերության կողմից իրավական խորհրդատվության ծառայությունների ամսական վճար:

Ծառայությունների ամսական վճարի չափ առաջարկելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Ընթացակարգի հրավերում խոսք է գնում առաջարկվելիք ծառայությունների ամսական վճարի մասին:

Մասնավորապես՝ հրավերի հավելված 1-ի համաձայն՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի «ծանոթություն» բաժնում նշված է եղել, որ մրցույթի մասնակիցները առաջարկում են ամսական վճարի չափը՝ ընթացիկ իրավաբանական սպասարկման, օրենսդրության բարելավման, բողոքարկման փուլի սպասարկման և դատական ներկայացուցչության ծառայությունների համար՝ անկախ ծավալից:

01.02.2019թ. ժամը 11:00-ին ըստ նախնական հրավերի Ընկերությունը ներկայացել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճ բանակցային գործընթացին մասնակցելու նպատակով, որին նաև ներկա են գտնվել «Զոհրաբյան և Գործընկեր» փաստաբանական գրասենյակ և «Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊ ընկերությունների (որոնք հանդես էին գալիս համատեղ գործունեության պայմանագրով)

ներկայացուցիչները: Բանակցությունների ընթացքում պարզվել է, որ հանձնաժողովը Ընկերության կողմից ներկայացված ամսական սպասարկման արժեքը դիտարկում է որպես տարեկան սպասարկման գին: Ընկերությունը առարկել է՝ մեջբերելով տեխնիկական բնութագրի համապատասխան հատվածը, որում հստակ նշված է, որ մասնակցի կողմից ներկայացվում է ամսական գինը: Ընթացակարգի մյուս մասնակցի ներկայացուցիչները նույնպես հավաստել են, որ թեև ներկայացրել են տարեկան սպասարկման արժեք, սակայն տեխնիկական բնութագրում նշվածը իրենց նույնպես շփոթեցրել է: Հաշվի առնելով Ընկերության պնդումները՝ հանձնաժողովն առաջարկել է ներկայացնել գրավոր պարզաբանում գնային առաջարկի վերաբերյալ, ինչն արվել է նույն օրը:

01.02.2019թ. «Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս Ընդ Լիգըլ» ՓԲԸ-ն պարզաբանում է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարություն՝ խնդրելով հանձնաժողովին Ընթացակարգի շրջանակներում դիտարկել Ընկերության կողմից առաջարկվող տարեկան 93 600 000 ՀՀ դրամ (7 800 000*12) ծառայությունների վճարի չափը:

Փաստորեն տեխնիկական բնութագրի բովանդակության առաջացրած թյուրիմացության պատճառով Ընկերության կողմից ներկայացվել է ոչ թե տարեկան սպասարկման այլ ամսական սպասարկման գին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովն այնուամենայնիվ Ընկերության կողմից տրված պարզաբանումից հետո նույնպես Ընկերության կողմից ներկայացված գինը համարել է ոչ թե ամսական սպասարկման, այլ տարեկան սպասարկման գին և պատրաստվում էր այդ գնով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել Ընկերությանը, Ընկերությունը հանդես է եկել երկրորդ գրությամբ:

07.02.2019թ. «Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս Ընդ Լիգըլ» ՓԲԸ-ն պարզաբանում է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարություն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին խնդրելով Ընկերության կողմից ներկայացված հայտը թողնել առանց քննության: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտը մերժվել է: Սակայն, Ընկերությունը կարծում է, որ այդ հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ՝ Ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար:

«ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 5.3 կետում նշված պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնին ուղղված պահանջն Ընկերության կողմից պահպանվել է և Ընթացակարգին ներկայացված հայտի թիվ 4 հավելվածում նշվել է որպես ընթացիկ ամսական մատուցվելիք ծառայությունների գին՝ հետևելով հրավերով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի մեջ նշված «ծանոթություն» սահմանմանը:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի հրավերի «Հայտի գնային առաջարկ» բաժնի 5,3 կետում նշված և հավելված 1-ում ներառված ամսական ընթացիկ ծառայությունների համար՝ պայմանագրի գնի հետ կապված հակասության պատճառով Ընկերությունը ներկայացրել է գնային առաջարկ՝ ընդունելի համարելով հավելված 1-ի պահանջը, ինչպես նաև Ընթացակարգի հրավերում տարեկան գին առաջարկելու պարտադիր պահանջի բացակայությունը և ներկայացրել է մատուցվելիք իրավաբանական խորհրդատվության ծառայությունների տարեկան ընդհանուր գնից՝ ամսական կտրվածքով մատուցվելիք ծառայությունների արժեքը: Այսինքն «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/1» ծածկագրով ընթացակարգի ներկայացված հրավերի առանձին կետերի սահմանումներիը և հավելված 1-ում շարադրված պահանջները հակասական են, ինչն էլ հիմք է հանդիսացել Ընկերության կողմից հրավերի պահանջի թյուրընկալման համար:

Ընկերության կողմից ներկայցված գրությունը հիմք ընդունելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ: Հետևաբար՝ Ընթացակարգում, գնահատման հանձնաժողովի որոշման համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Փաստորեն Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը ոչ ճիշտ կազմելու պատճառով՝ մանսավորապես՝ Ընթացակարգն անցկացնելով տարվա համար, սակայն առանց որևէ հիմնավորման մասնակցից պահանջելով ամսական սպասարկման միասնական գին, առաջացել է իրավիճակ, որը թյուրիմացության մեջ է գցել Ընթացակարգի մասնակցին, ըստ էության զրկելով նրան մրցույթի համար մրցունակ գնային առաջարկ ներկայացնելու հնարավարությունից: Դրանով իսկ խախտելով Ընկերության իրավունքը:

Բացի այդ դրանով խախտվել է նաև Պատվիրատուի իրավունքը, քանի որ վերջինս զրկվել է իրական մրցակցության պայմաններում իրավաբանական ծառայություններ ձեռքբերելու հնարավորությունից:

«Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս Ընդ Լիգըլ» ՓԲԸ-ն «Բի Դի Օ» միջազգային ցանցի հայաստանյան անդամ է: Ընկերությունն իր գործունեությունը ՀՀ-ով ունի 15 տարվա պատմություն և այդ տարիների ընթացքում բացառապես առաջնորդվել է ինչպես գործընկերներին, այնպես էլ հաճախորդներին բարեխղճորեն ծառայություններ մատուցելու սկզբունքով:

Հրավերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն իրավաբանական ծառայությունների բավականին մեծ ծավալ է ենթադրում՝ չորս իրավաբանների լրիվ աշխատաժամանակով ներգրավվածություն, իրավաբանական ծառայությունների լայն սպեկտր, դատական ներկայացուցչությունից մինչև օրենքների նախագծերի վրա աշխատանք, առանց ծավալների սահմանափակման սպասարկում: Ակնհայտ է, որ վերը նշվածն անհնար է իրականացնել ամսեկան 542 հազար ՀՀ դրամով:

Վերոգրյալի հիման վրա՝ Ընկերությունը խնդրել է վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերություն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/56 ընթացակարգի շրջանակներում 07.03.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.02.2019թ. թիվ ԴՎԱ/684 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար իրավական խորհրդատվության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/1» ծածկագրով ընթացակարգում «Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս Ընդ Լիգըլ» ՓԲԸ-ն

գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մանսակից: Հայտերը բացվելուց հետո Ընկերությունը ներկայացրել է գրություն՝ ուղղված գնահատող հանձնաժողովին, համաձայն որի վերջինս խնդրում է իր կողմից ներկայացված հայտը թողնել առանց քննության: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի պահանջը՝ որոշել է մերժել «Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս Ընդ Լիգըլ» ՓԲԸ-ի հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/53 ընթացակարգի շրջանակներում 07.03.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2019/53 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2019/53 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների իրավական խորհրդատվության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս Ընդ Լիգըլ» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն 01.02.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված բանակցությունների վարման նիստին պարզվել է, որ «Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս Ընդ Լիգըլ» ՓԲԸ-ի կողմից հայտի թիվ 4 հավելվածով ներկայացված գնային առաջարկում նշված «Ընդհանուր գինը» ծառայությունների մատուցման համար ամսական վճարի չափն է, այլ ոչ թե տարեկան վճարի չափն, ինչը չի համապատասխանում հրավերի 5.3 կետի պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերությունը գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ խնդրել է իր կողմից ներկայացված հայտը թողնել առանց քննության,

որը հիմք ընդունելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.03.2019թ. թիվ 26/26/3353-19 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 21.02.2019թ. թիվ ԴՎԱ/684 գրությունը և կից փաստաթղթերը, «Բի-Դի-Օ Ընդ Թաքս Ընդ Լիգալ» ՓԲԸ-ի 05.03.2019թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. ***հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:***

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների իրավական խորհրդատվության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս Ընդ Լիգըլ» ՓԲԸ-ն:

Գնահատող հանձնաժողովին ուղղված 07.02.2019թ. գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ հայտի թիվ 4 հավելվածում ներկայացված գնային առաջարկում նշված «Ընդհանուր գինը»՝ «7 800 000 (յոթ միլիոն ութ հարյուր հազար)» ՀՀ դրամի չափով (ներառյալ ԱԱՀ) իրենից ներկայացնում է Ընկերության կողմից իրավական խորհրդատվության ծառայությունների մատուցման համար ամսական վճար:

Ծառայությունների ամսական վճարի չափ առաջարկելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Ընթացակարգի հրավերում որևէ ուղղակի պահանջ չի եղել սահմանված ծառայությունների համար տարեկան գին առաջարկելու պարտադիր պայմանի վերաբերյալ, մինչդեռ դրանով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի մեջ ներառված ծանոթագրությունում նշված է եղել, որ Մրցույթի մասնակիցները առաջարկում են ամսական վճարի չափը՝ ընթացիկ իրավաբանական սպասարկման, օրենսդրության բարելավման, բողոքարկման փուլի սպասարկման և դատական ներկայացուցչության ծառայությունների համար՝ անկախ ծավալից:

Փաստորեն տեխնիկական բնութագրի բովանդակության առաջացրած թյուրիմացության պատճառով ներկայացվել է ոչ թե տարեկան սպասարկման, այլ ամսեկան սպասարկման գին:

Նույն գրությամբ «Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս Ընդ Լիգըլ» ՓԲԸ-ն գնահատող հանձնաժողովին խնդրել է իր կողմից ներկայացված հայտը թողնել առանց քննության:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն 01.02.2019թ.ժամը 11:00-ին հրավիրված բանակցությունների

վարման նիստին պարզվել է, որ «Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս Ընդ Լիգըլ» ՓԲԸ-ի կողմից հայտի թիվ 4 հավելվածով ներկայացված գնային առաջարկում նշված «Ընդհանուր գինը» ծառայությունների մատուցման համար ամսեկան վճարի չափն է, այլ ոչ թե տարեկան վճարի չափն, ինչը չի համապատասխանում հրավերի 5.3 կետի պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերությունը գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ խնդրել է իր կողմից ներկայացված հայտը թողնել առանց քննության, որը հիմք ընդունելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Արձանագրում եմ, որ «Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս Ընդ Լիգըլ» ՓԲԸ-ն «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի խախտում, քանի որ հայտերը բացելուց հետո համապատասխան գրությամբ դիմել է գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով առանց քննության թողնել վերջինիս կողմից ներկայացված հայտը՝ հրաժարվելով գնման գործընթացի հետագա մասնակցությունից:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմցից ներկայացված դիրքորոշմանը ապա հայտում եմ հետևյալը.

Հրավերի 5-րդ կետի 5.3-րդ ենթակետով սահմանվել է, որ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Հրավերով սահմանված պայմանագրի նախագծի 4-րդ կետի 4.1 ենթակետով նախատեսվել է, որ ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Հրավերի թիվ 4 հավելված՝ գնային առաջարկի օրինակելի ձևով նախատեսվել է, որ մասնակիցները գնային առաջարկը ներկայացնում են պայմանագրի համար առաջարկվող ընդհանուր գնով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ գնային առաջարկը շտկման ենթակա չէ:

Դրա հետ մեկտեղ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը սահմանում է մասնակցի՝ հրավերի վերաբերյալ պարզաբանում ստանալու իրավունքը և այն իրականացնելու կարգը:

Բոլոր դեպքերում, արձանագրում եմ, որ Ընկերությունը, հայտերը բացվելուց հետո հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից, որը հիմք է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.03.2019թ. թիվ 26/26/3353-19 գրությամբ «Բի-Դի-Օ Ընդ Լիգը» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Բի-Դի-Օ Ընդ Լիգը» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ